ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Քաղ. Երևան 15.06.2022 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ֆերթիլիթի Սենթր» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Էդուարդ Համբարձումյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի N 522-Ն և 2022 թվականի հունիսի 2-ի N 802-Ն որոշումները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված «Զոհված զինծառայողների ծնողների վերարտադրողական առողջությանն աջակցելու նպատակով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման որոշ ծախսերի մասնակի փոխհատուցման տրամադրում» միջոցառումը (այսուհետ՝ միջոցառում) իրականացնելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է միջոցառման իրականացման նպատակով մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը կազմակերպությանը հատկացնել ընդհանուր առմամբ 30,000.0 հազ. դրամ (15.04.2022թ. N 522-Ն որոշումով 12.400.0 հազ դրամ, իսկ 02.06.2022թ. N 802-Ն որոշումով 17.600.0 հազ դրամ), որպես միջոցառման շրջանակներում դոնորական ձվաբջջի ձեռքբերման համար կատարված ծախսերի փոխհատուցում:

1.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարը նախարարությունը կազմակերպությանը հատկացնում է վերջինիս բանկային հաշվին պարբերական փոխանցումներ կատարելու միջոցով՝ հիմք ընդունելով որոշման N 2 հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում նշված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության տրամադրած համապատասխան տեղեկատվությունը:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է սույն պայմանագրի 1.2-րդ կետում նշված տեղեկատվության հիման վրա դրամական միջոցները պարբերաբար՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, անկանխիկ եղանակով փոխանցել կազմակերպության բանկային հաշվին և փոխանցումը կատարելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնել կազմակերպությանը՝ նշելով շահառու ծնողների անձնական տվյալները (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, սերիան), փոխանցված գումարի չափը և փոխհատուցումը կազմակերպության բանկային հաշվին փոխանցելու օրը:

2.2 Շահառուների անձնական տվյալներում (անունի, ազգանունի, անձը հաստատող փաստաթղթի համարի, սերիայի) կամ փոխանցված գումարների չափերում անճշտություններ հայտնաբերելու դեպքում կազմակերպությունը պարտավոր է այդ մասին

հայտնել նախարարությանը՝ անճշտություններ հայտնաբերելու օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. 2022 թվականի դեկտեմբերի 28-ին կազմակերպությունը պարտավոր է նախարարությանը տրամադրել սույն պայմանագրի շրջանակներում ստացած փոխհատուցման գումարների (այդ թվում՝ հանրագումարի), շահառուների (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, սերիան) վերաբերյալ տեղեկատվություն:

2.4.Կազմակերպությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ՝ մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը, հրաժարվել փոխհատուցում ստանալուց՝ այդ մասին տեղեկացնելով նախարարությանը:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը: Պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով:

3.2.Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրի շրջանակներում կողմերի միջև տեղեկատվությունը փոխանակվում է էլեկտրոնային եղանակով՝ կողմերի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

5.2. Սույն պայմանագրի 1.2-րդ կետում նշված տեղեկատվության հիման վրա սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի փոփոխությունը (ավելացումը կամ պակասեցումը) կատարվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով:

5.3. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ կողմերից մեկի կողմից պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում: Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին

ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն 2 ամիս առաջ:

5.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

5.5. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

5.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, Երևան, Կառավարական տուն 3 էլեկտրոնային փոստի հասցե՝ info@mlsa.am Հ/Հ 900011040475 ՀՎՀՀ՝ 01506515 Գլխավոր քարտուղար --- (ստորագրություն) Կ.Տ.	Գտնվելու վայրը՝ ՀՀ, Երևան, Տ.Մեծի 4 էլեկտրոնային փոստի հասցե՝ fertilitycenter@mail.ru Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Հ/Հ 2050022536511001 ՀՎՀՀ 02708149 Տնօրեն՝ --- (ստորագրություն) Կ.Տ.